

Մ-23

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՒՐԵՆ ԱՂԱՍՈՒ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ  
1960-80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Է. 00.02 - «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»  
մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2002

Սեպտեմբեր 14-ին Ա. Բաղդասարյան

Առկա Սահմանափակում

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտխորհրդում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Բ. Գ. Սեյրանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Վ. Ա. Բայրուրոյան  
պատմական գիտությունների թեկնածու՝ Ռ. Կ. Կարապետյան


Առաջատար կազմակերպություն՝ Խ. Արուստյանի անվան հայկական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2002թ. նոյեմբերի 29-ին, ժ. 14-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՅ-ի 006 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24 գ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2002թ. հոկտեմբերի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար

 Ս. Կ. Բաղդասարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Իսլամական արմատականության ձևավորման և հետագա զարգացման հետ առնչվող հարցերի ուսումնասիրությունը չափազանց արդիական է ինչպես Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանում, այնպես էլ ժամանակակից ամբողջ աշխարհում առկա գործընթացների տրամաբանության ըմբռնման տեսանկյունից: 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերը մեկ անգամ ևս փաստեցին իսլամական աշխարհի և արևմտյան քաղաքակրթության միջև հասունացող հակամարտության անկանխատեսելիությունը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև Միրիայի Արաբական Հանրապետության (ՍԱՀ) որպես մերձավորարևելյան տարածաշրջանում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական կարեոր գործընկերոջ, ներքաղաքական զարգացումների ուսումնասիրման կարևորությամբ: Այս տեսակետից չափազանց կարևոր է այդ զարգացումների առաջացման ու զարգացման խորքային մեխանիզմների ուսումնասիրությունը:

XX դ. 60-ական թթ. նշանավորվեցին հզոր, դինամիկ զարգացող քաղաքական իսլամի շարժման ակտիվացմամբ: Այս գործընթացն ուղեկցվում էր իսլամական կազմակերպությունների հզորացմամբ և ռազմականացմամբ: Դառնալով հասարակական-քաղաքական մտքի հատուկ ուղղություն, իսլամական արմատականությունը սկսեց մեծ դեր խաղալ առանց այն էլ քաղաքական, տնտեսական և հասարակական զգալի փոփոխությունների ենթարկված տարածաշրջանային շատ երկրների ներքաղաքական կյանքում: Այդ երկրներից մի քանիսի համար արմատականությունը դարձավ ներքաղաքական իրավիճակի ավակայունացման հիմնական պատճառներից մեկը և լուրջ մարտահրավեր նետեց տեղական իշխանություններին:

Ներկայումս իսլամական շարժման բնորոշումը և զնահատումը հանդիսանում են գիտական լուրջ բանավեճերի առարկա: Բավական է ասել, որ նույնիսկ մինչև վերջ տարանջատված չէ ուսումնասիրության առարկա հանդիսացող թեմայի տերմինաբանությունը:

Թեև կրոնական արմատականության երևույթը կրում է համաիսլամական բնույթ, սակայն յուրաքանչյուր երկրում այն ունի դրսևորման իր առանձնահատկությունները և տրամաբանությունը: Միրիայում դրանք վառ կերպով

արտահայտվեցին Բաաս կուսակցության իշխանության գալուց հետո, երբ երկրի զարգացման հիմքում դրվեց աշխարհիկության սկզբունքը, իսկ իսլամական «Մուսուլման եղբայրների» կազմակերպության գործունեությունը տեղափոխվեց ընդհատակ: Գրանցվեցին նաև լուրջ սոցիալական տեղաշարժեր, երբ մինչ այդ տիրապետող դասերը և խավերն որոշակիորեն հեռացվեցին իշխանական ասպարեզից, ինչը ներքաղաքական լարվածության պատճառ հանդիսացավ: Իշխանությունից հեռացվեցին սուենիները, և ղեկավարությունը հետզհետե անցավ Սիրիայում կրոնական փոքրամասնություն հանդիսացող ալավիների ձեռքը, ինչը բնակչության մեծամասնությունը կազմող սուենիների շրջանում ընդվզման առիթ տվեց:

Այս շրջանում եղած իրադարձությունների ուսումնասիրությունը և վերլուծությունը՝ հնարավորություն կընձեռի պարզելու իսլամական արմատականության առաջացման և ծայրահեղացման պատճառները, ուսումնասիրելու այն բոլոր գործընթացները, որոնք ընթանում են այս շարժման ընդերքում, միաժամանակ դրա առանձնահատկությունների քննությամբ կանխագուշակելու ապագայում Սիրիայում իսլամական շարժման առաջացման հնարավորությունը:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Իսլամական արմատականությունը մեծ դեր է խաղացել ՍԱՀ քաղաքական պատմության մեջ: 1976-1982 թթ. երկրում տեղի է ունենում իսլամական արմատականների և բասսական վարչակարգի միջև ընթացող դաժան հակամարտություն: Այն ժամանակվանից քաղաքական և ռազմական շրջանակներում բազմաթիվ բանավեճեր են սկսվել իշխող բասսական վերնախավի և իսլամական արմատականների միջև փոխհարաբերությունների ու Սիրիայում իսլամական շարժման առաջացման, զարգացման շուրջ: Ի թիվս այլոց, քննարկվող հարցերի շարքում էր Սիրիայում իսլամիզմի զարգացման պարբերականացումը և այդ երևույթի նման սուր դրսևորման պատճառները, ինչպես նաև իշխող վարչակարգի և իսլամական կազմակերպությունների գործողությունների և մարտավարության վերլուծությունը:

20-րդ դ. Մերձավոր և Միջին Արևիլքի մի շարք երկրներում բարենպաստ նախապայմաններ ստեղծեցին իսլամական շարժման առաջացման և դրա հետագա խորացման համար: Այս երկրները մեկը մյուսի հետևից բախվում էին այդ խնդրի

հետ՝ փորձելով գտնել նրա լուծման սեփական ձևերը: Պետք է նշել, որ տարբեր երկրներում քաղաքական իսլամի դրսևորումներն ունեին իրենց յուրահատկությունները: Շատ կարևոր է հետազոտել սիրիական իսլամիզմի պատմությունն ընդհանուր իսլամական շարժման պատմության համատեքստում, միաժամանակ պարզելով նաև մյուս երկրների արմատական ուժերի փոխհարաբերությունները սիրիական «Մուսուլման եղբայրների» հետ: Դրան հասնելու համար, հեղինակն իր առջև է դրել հետևյալ խնդիրները.

- դիտարկել քաղաքական իսլամի զարգացման գործընթացը Սիրիայում 20-րդ դ. 60-80-ական թթ.,
- մշակել դրա գիտական պարբերականացումը, իսլամական շարժումների առաջացման ու կտրուկ վերելքի պատճառները,
- ներկայացնել իսլամական կազմակերպությունների նպատակները, կազմակերպական կառույցը և սիրիական հասարակության մեջ իսլամիստների գրաված տեղը, պարզել նրանց միջազգային կապերը,
- լուսաբանել քաղաքական իսլամի դեմ վարչակարգի կողմից կիրառվող պայքարի ձևերն ու մեթոդները, կատարել իսլամիստների գաղափարական հայացքների վերլուծություն, իշխանությունների և ընդդիմադիր ուժերի սոցիալական հենարանների սահմանազատում և երկկողմ փոխհարաբերակցության վերլուծություն,
- ներկայացնել քաղաքական իսլամի զարգացման որոշակի հեռանկարները:

Այսպիսով, կարելի է ասել, որ հետազոտության հիմնական նպատակն է սիրիական իսլամիզմի կարևորագույն հատկությունները և դրա բնորոշման պարզաբանումը:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է հայ պատմագիտության մեջ առաջին անգամ Սիրիայում իսլամական արմատականության վերաբերյալ համակարգված հետազոտություն ներկայացնելու փորձի մեջ:

Թեկնածուական ատենախոսությանն առնչվող գիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած առանձին արևելագետներ անդրադարձել են այս շրջանի Սիրիայի սոցիալ-քաղաքական զարգացման պատմությանը վերաբերող հարցերին, այնուհանդերձ, 20-րդ դ. երկրորդ կեսին Սիրիայում վերելք

ապրած իսլամական շարժման պատմության հարցերը հատուկ և համակողմանի քննության չեն ենթարկվել: Մասնավորապես.

1. Ատենախոսության թեման հայ պատմագիտության մեջ չի հանդիսացել առանձին ուսումնասիրության առարկա:

2. Հետազոտություններում իր արտահայտությունը գրեթե չի գտել Բասս վարչակարգի և իսլամականների միջև հակասությունների առաջացման և սրացման պատմությունը, ինչպես նաև իսլամական շարժման առաջացման և դրա ակտիվացմանը նպաստած գործոնների ընդհանուր վերլուծությունը:

3. Այս շրջանին վերաբերվող աշխատանքներում բացակայում է նաև հակամարտող կողմերի՝ սիրիական վարչակարգի և «Մուսուլման եղբայրների» սոցիալական բազայի հետազոտությունը:

4. Խորը քննության առարկա չի հանդիսացել նաև սիրիական իսլամիզմի էության և առանձնահատկությունների գնահատումը ընդհանուր իսլամական շարժման մեջ:

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է աշխատանքի բովանդակության և հարցադրումների առանձնահատկության մեջ: Փորձ է կատարվել համակողմանի վերլուծության ենթարկել Սիրիայում իսլամական շարժման զարգացման ընթացքը և առանձնահատկությունները՝ դիտարկելով դրանց գնահատման շուրջ առկա տարածայնություններն ու տեսակետները, որոնք աշխատանքում բազմակողմանի վերլուծության են ենթարկվել:

Հեղինակն իր առջև խնդիր է դրել ոչ միայն համադրել այդ գնահատականները, այլև սեփական հետազոտության միջոցով արժեքավորել այս երևույթի զարգացումն ու հեռանկարները:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ատենախոսության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1963-1986թթ.:

1963 թ. Սիրիայում իշխանության եկավ «Բասս» կուսակցությունը: Այս իրադարձությունը յուրօրինակ ջրբաժան է համարվում Սիրիայի պատմության մեջ: Երկրում տեղի են ունեցել լուրջ տեղաշարժեր, որոնք չեն շրջանցել նաև «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը:

1963 թ. սկսվել է իսլամական շարժման արմատականացումը, որը հանգեցրել է ներքին քաղաքական իրավիճակի սրացմանն ու 1976 թ. ավելի սուր հակամարտության բռնկմանը, որն իր ակտիվ փուլն է թևակոխել 1979-1982 թթ.:

Թեև 1982 թ. Համա քաղաքի ապստամբության ճնշումից հետո իսլամական խմբավորումները գտնվում էին շոկային իրավիճակում, սակայն, որոշ դադարից հետո, նրանք փորձեցին վերականգնել իրենց ազդեցությունը: 1986 թ. շարժման ներսում տեղի ունեցավ վերջին պառակտումը, ինչը հանգեցրեց սիրիական արմատականների վերջնական կազմալուծման:

Չնայած նշված ժամանակագրական սահմաններին, ելնելով առաջադրված հարցադրումներից, ատենախոսության մեջ երբեմն ծավալուն անդրադարձներ են կատարված 40-60-ական թթ. ժամանակահատվածին և նույնիսկ Առաջին աշխարհամարտին հաջորդած ժամանակաշրջանին:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը գրվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն և արաբերեն լեզուներով գրականության հիման վրա: Աշխատանքը շարադրելու ընթացքում օգտագործվել են հայ, խորհրդային, ռուսական, արաբ և արևմտյան հեղինակների բազմաթիվ աշխատություններ, փաստաթղթային աղբյուրներ, պաշտոնական և վիճակագրական հրատարակումներ, ինչպես նաև պարբերականներ:

Ցավոք, հաշվի առնելով աշխատանքի բնույթը, շատ դժվար է եղել օգտագործել սիրիական սկզբնաղբյուրները, քանի որ ներկայումս սիրիական իսլամիզմի ուսումնասիրությունն այդ երկրում տաքուսցված թեմաներից մեկն է հանդիսանում:

Վիճակագրական նյութերի ուսումնասիրության և դրանք գիտական շրջանառության մեջ դնելու առումով, օգտակար էին խորհրդային շրջանում հրատարակված «Սիրիայի Արաբական Հանրապետություն» ժողովածուի տարբեր տարիների հրատարակությունները, ինչպես նաև ինտերնետային ցանցում տեղադրված վիճակագրական տվյալները:<sup>1</sup> Չափազանց կարևոր էին այնպիսի աղբյուրների օգտագործումը, ինչպիսիք են ՍԱՀ Սահմանադրությունն ու Սիրիայի

<sup>1</sup> Современная Сирия (Справочник), М., 1958, Сирийская Арабская Республика, М., 1981, Сирийская Арабская Республика, М., 1997, IDB Summary Demographic Data for Syria из U.S. Census Bureau, International Data Base. <http://www.census.gov/ipc/www/idbnew.html>

Իսլամական ճակատի ծրագրային փաստաթղթերը<sup>2</sup>: Բավական լուրջ աղբյուրագիտական նյութ է պարունակվում նաև Հ.ալ-Ասադի ճառերի, ելույթների և հարցազրույցների ժողովածուի մեջ<sup>3</sup>:

Հարկ է հատուկ նշել հայ գիտնականների կատարած հետազոտությունների մասին: Հատկապես ուշագրավ են Ն. Հովհաննիսյանի, Պ. Սարաջյանի, Ռ. Կարապետյանի, Ա. Բայրամյանի, Ե. Աբգարյանի և Վ. Վաղարշյանի մենագրությունները և հոդվածները<sup>4</sup>, որոնցում բազմակողմանիորեն լուսաբանվում են նշված ժամանակաշրջանում տեղի ունեցող իրադարձությունները: Պ. Սարաջյանի հետազոտությունը հանդիսանում է սիրիական իսլամիզմին նվիրված առաջին աշխատանքներից մեկը: Բացի դրանից, աշխատանքն առանձնանում է հարուստ նյութով և աղբյուրագիտական հենքով: Բազմակողմանի վերլուծություններ են պարունակվում Ն. Հովհաննիսյանի աշխատություններում: Դրանք նվիրված են քաղաքական իսլամի ակտիվացմանը, Սիրիայի պատմությանը և հարևան երկրների հետ ԱՄՀ հարաբերությունների միջազգային ասպեկտին: Վերջինի հետ համահունչ են նաև Ռ. Կարապետյանի աշխատությունները:

Թեմայի ուսումնասիրության կարևորության մասին են վկայում իսլամական արմատականության հիմնախնդիրներին վերաբերվող խորհրդային և ռուսական մի շարք արաբագետների աշխատանքները: Հիշատակության արժանի են Ա. Ալեքսանդրովի, Վ. Ախմեդովի, Վ. Վավիլովի, Գ. Գուչետլի, Ա. Իզմատենկոյի, Ս. Իվանովի, Զ. Լևինի, Դ. Մալիշևայի, Գ. Միրսկու, Վ. Նաումկինի, Է. Պիր-Բուդաղովայի,

Ա. Ֆիլոնիկի և Յու. Տեգինի հոդվածներն ու մենագրությունները<sup>5</sup>: Նշված գիտնականներից յուրաքանչյուրն ուսումնասիրել է ատենախոսության բեմային վերաբերվող տարբեր ասպեկտներ: Եթե Զ. Լևինի, Վ. Նաումկինի և Դ. Մալիշևայի աշխատանքները արժեքավորվում են իսլամի քաղաքանացման և իսլամիզմի զաղափարական հայացքների խորը տեսական վերլուծությամբ, ապա Է. Պիր-Բուդաղովան, Վ. Ախմեդովը և Յու. Տեգինը ներկայացրել են Սիրիայի քաղաքական պատմության հետ կապված հսկայական փաստագրական նյութ: Ա. Ֆիլոնիկի և Վ. Վավիլովի աշխատանքները չափազանց կարևոր են Մերձավոր Արևելքի երկրներում և, մասնավորապես, ԱՄՀ-ում տիրող տնտեսական հարաբերությունների խորը վերլուծությամբ, քանի որ շատ հաճախ քաղաքական երևույթներն իրենց հիմքում ունենին վառ արտահայտված տնտեսական պատճառներ: Մերձավորարևելյան իրադարձություններում բանակի դերը մանրամասն վերլուծված են Գ. Միրսկու աշխատանքներում: Արաբական երկրների հետ Սիրիայի արտաքին քաղաքական կապերի հետազոտման առումով հատկապես արժեքավոր է Ս. Իվանովի աշխատանքը: Դրա հետ մեկտեղ, այս աղբյուրներն օգտագործելիս, անհրաժեշտ է հաշվի առնել նշված աշխատանքներում խորհրդային պատմագրությանը հատուկ կոնյուկտուրայի կնիքը և քաղաքական ենթատեքստը: Սա վերաբերվում է մինչև 20 դ. 90-ական թթ. կատարված հետազոտություններին, երբ քաղաքական նկատառումներով լուսաբանման համար ոչ ցանկալի հիմնախնդիրները հաճախ շրջանցվում էին: Այդուհանդերձ, քննադատաբար մոտենալով խորհրդային

<sup>2</sup> Syria - Constitution/ Adopted on: 13 March 1973 / ICL Document Status: 13 March 1973 / on <http://www.uni-wuerzburg.de/law/sy00t.html>, The Manifesto of the Islamic Revolution of Syria in Abd-Allah, Unar F. The Islamic Struggle in Syria, Berkeley, 1983, The Programs of the Islamic Revolution in Abd-Allah, Unar F. The Islamic Struggle in Syria, Berkeley, 1983

<sup>3</sup> Мир глазами президента Сирии Хафеза Асада, М., 2000

<sup>4</sup> Оганесян Н.О., Активизация ислама: характер, специфика и последствия // Ислам в политической жизни стран Современного Ближнего и Среднего Востока, Ереван., 1986, Образование независимой Сирийской республики (1939 – 1946), М., 1968, Политика империалистических держав на арабском Востоке в годы второй мировой войны, Ереван, 1980; Сараджян П.А., Активизация деятельности организации «Братья-мусульмане» в Сирии в 1979-1982 гг. // Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока, Ереван., 1986, Урдуական Արևելքի կոնուհիտական կուսակցությունների և առաջադիմական ուժերի պայքարը դեմոկրատիայի և սոցիալ-տնտեսական վերափոխումների համար, Երևան, 1986; Աբգարյան Է.Ա., Религиозно-политическая организация «Братья-мусульмане» в Египте // Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока, Ереван., 1986, Вагарян В.Л., Ислам и национализм в западных концепциях развития арабских стран (1950-1969-е гг.) // Проблемы современной советской арабистики. Современные политические и социально-экономические проблемы арабских стран, Ереван, 1988; Բայրամյան Ա.Ս., Միջազգային դիվանագիտությունը և իրավաքաղաքական դրոշմերը Ալեքսանդրիտի անջարում (Հարայ) (1938 թ. սեպտեմբեր – 1939 հուլիս) // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 3, 1967; Կարապետյան Ռ., Սիրիա-ամերիկյան հարաբերությունները 1967-1996 երևան, 2000, Սիրիա և Իսրայել. չօգտագործված հնարավորությունները և ապագա հեռանկարները իսրայելի և սիրիայի հաստատման համար (1991-2001) // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 20, Երևան, 2001

<sup>5</sup> Александров А.И., Политика Сирии: долговременная стабильность или затянувшаяся неопределенность? // Ближний Восток и современность. Сборник статей (выпуск 6), М., 1998, Ахмедов В.М, Россия, арабы и Кавказ // Арабский сборник, М., 2000, Внутриполитическая обстановка и судьбы правящего режима в Сирии // Ближний Восток и современность (вып. 7), М., 1999; Вавилов В.В., Социально-экономические преобразования в Сирии, М.: 1972, Гучетль Г.И., Демократизация в арабском мире, опыт Туниса и Сирии, М., 1999; Иванов С.А., Межарабская политика Сирии, том 1, М., 1986; Игнатенко А.А., Халифы без халифата, М., 1988; Левин З.И. Мусульманское реформаторство и политика // Ислам и исламизм, М., 1999, Влияние ислама на идеологию национальной демократии // Современный ислам: проблемы политики и идеологии (вып. 4, часть 3), М., 1988; Мальшова Д.Б., Религия и общественно-политическое развитие арабских и африканских стран, 70-80-е годы, М., 1986 г.; Мирский Г.И., Армия и политика в странах Азии и Африки, М., 1970, Проблемы социалистической ориентации в арабских странах и роль военных // Проблемы современной арабистики. Современные политические и социально-экономические проблемы арабских стран, Третий мир. Общество, власть, армия, М., 1976; В.Наумкин, О дальнейшей политизации исламского движения в странах Ближнего и Среднего Востока // Современный ислам: проблемы политики и идеологии, вып. 4, часть 3, М., 1988; Пир-Будагова Э.П. Сирия в борьбе за упрочение национальной независимости (1945-1966), М., 1978, Некоторые особенности межгосударственных отношений России и Сирии на современном этапе // Арабский мир в конце XX века, М., 1996; Тегин Ю.Л., К проблеме комплексного исследования исламского экстремизма // Ближний Восток и современность, (вып.7), М., 1999, Исламский Фронт в Сирии: цели и задачи // Восток и современность, № 5, М., 1982; Филоник А.О., Исламские банки и возможности становления исламской экономики // Ближний Восток и современность (вып.4) М., 1997

հեղինակների աշխատանքներին, դրանք մեծապես օգտագործվել են աշխատանքի շարադրման ընթացքում:

Արաբական հեղինակների աշխատանքները, որոնք, ինչպես վերը նշեցինք, նշանակալի չափով անհասանելի էին, օգտագործվել են Սիրիայից դուրս հրապարակված անգլերեն թարգմանություններով: Արաբ հեղինակների ուսումնասիրությունները ներկայացված են Ունար Աբդալլահի, Յաֆիզուլահ Էմադիի, Մոհամեդ Յեյբալի և Նազիհ Այուբիի աշխատություններով<sup>6</sup>, ինչպես նաև սիրիական պաշտոնական ՁԼՄ-ների տվյալներով: Դրանք բոլորը նույնպես դիտարկվել են քննադատաբար: Շատ հաճախ պաշտոնական նյութերն իրենցից ներկայացնում են ավելի շատ քաղաքական, քան պատմական արժեք: Դրա հետ մեկտեղ, դրանցում մեծ փաստագրական նյութ է պարունակվում՝ որոշակի պատկերացումներ տալով ՍԱՀ ներքաղաքական կյանքի մասին: Իսկ պաշտոնական «Թիշրին» և «ալ-Բասս» թերթերում հրապարակված հոդվածներն ու տվյալները հստակ պատկերացում են ստեղծում իշխող վարչակարգի դիրքորոշման մասին: Հատկապես պետք է առանձնացնել Ունար Աբդ Ալլահի աշխատանքը, որում առավել մանրամասն են դիտարկվել մեր հետազոտությանն անմիջականորեն վերաբերվող հիմնախնդիրները: Պետք է հաշվի առնել, սակայն, որ հեղինակն անթաքույց համակրանքով է վերաբերվում իսլամականներին, իսկ այս դեպքում, բնականաբար, տուժում է նյութի ներկայացման անկողմնակալությունը: Բացի այդ, աշխատանքը հրապարակված է 1983 թ., երբ իսլամիստական շարժման հեռանկարները և շատ այլ հիմնախնդիրներ դեռ զմահատված չէին: Դրա հետ մեկտեղ, չափազանց արժեքավոր են այս աշխատանքի հավելվածի տեսքով ներկայացված Սիրիայի Իսլամական ճակատի հայտարարությունը և ծրագիրը:

Նման քննադատական մոտեցում պետք է դրսևորել նաև հրեա պատմաբաններ Է.Զիսսերի, Մ.Կրամերի, Մ.Մառզի, Ի.Ռաբինովիչի, Գ.Փայսի ուսումնասիրությունների<sup>7</sup> նկատմամբ, քանի որ դրանք, իրենց հետազոտական

անժխտելի արժեքի հետ մեկտեղ, պարունակում են նաև սուբյեկտիվ զնահատականներ՝ պայմանավորված Սիրիայի և Իսրայելի միջև լարված հարաբերություններով: Է.Զիսսերի և Մ.Կրամերի աշխատանքներն արժեքավոր են ՍԱՀ իշխանական և ռազմական կառուցվածքի, էթնիկական և կլանային կազմի ուսումնասիրման համար: Մ.Մառզը զբաղվելով Հալ-Ասադի կենսագրությամբ, չէր կարող շրջանցել նաև իսլամական ընդդիմության հիմնախնդիրների վերլուծությունը: Համապատասխան գլուխներում նա մանրամասն անդրադառնում է դրանց կատարելով ուշագրավ վերլուծություններ: Որոշ հետաքրքրություն են ներկայացնում Գ.Փայսի հոդվածները և գրքերը, որոնք առանձնանում են ոչ միայն հարուստ փաստական նյութով, այլև յուրաքանչյուր ոճով և զնահատականներով:

Իսլամական արմատականության թեման ընդհանրապես, և Սիրիայի, որպես տարածաշրջանային կարևորագույն երկրի, դերի ուսումնասիրությունը մասնավորապես, գտնվել են բազմաթիվ արևմտյան հեղինակների ուշադրության կենտրոնում: Ուշագրավ են հատկապես Խ.Բաթաթուի, Ռ.Հիններուլի, Պ.Սիլի, Հ.Դեքմեյանի, Գ.Պերեյրայի և Տ.Մեյերը բազմաթույթ աշխատությունները<sup>8</sup>: Հ.Դեքմեյանի աշխատանքները հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում ունենալ ժամանակակից իսլամական արմատականության ներսում տեղի ունեցող հիմնական երևույթների մասին: Բացի այդ, նա մանրակրկիտ դիտարկել է սիրիական իսլամիզմի թեման: Հատկապես դիտարժան են շարժման սոցիալական հենարանի վերլուծությունը, առաջնորդների անձնական հատկությունների բնորոշումները: ՍԱՀ միջիշխանական հարաբերությունների բարդ համակարգն են լուսաբանում Խ.Բաթաթուի հետազոտությունները: Հետաքրքրական է նաև Պ.Սիլի աշխատանքը, որը լինելով մի շարք արևմտյան ամսագրերի թղթակիցը Սիրիայում, անձամբ գտնվում էր տեղի ունեցող իրադարձությունների կենտրոնում: Եվ, անկասկած, պետք է նշել Սիրիայի բնասական ռեժիմը ուսումնասիրող Ռ.Հիններուլի հիմնարար աշխատանքը:

<sup>6</sup> Abd-Allah, Unar F., *The Islamic Struggle in Syria*, Berkeley, 1983; Emadi Hafizullah, *The 'infitalh' politics and the failure of political Islam in Syria // Contemporary Review* (Dec, 1998); Heikal M.N., *Autumn of Fury: the Assassination of President Sadat*, L., 1984, Ghadbian Najib, *Contesting The State Media Monopoly: Syria On Al-Jazeera Television // MERIA* (Vol. 5, No. 2 - June 2001); Ayubi Nazih, *The Politics of the Militant Islamic Movements in the Middle East // Journal of International Affairs*, (vol 36 No 2, 1982/83)

<sup>7</sup> Kramer M., *Syria's Alawis and the Shi'ism // Kramer M., Shi'ism: Resistance and Revolution*, Boulder, 1982; Ma'oz Moshe, *Asad. The Sphinx of Damascus. A Political Biography*; Rabinovich Itamar, *Stability and Change in Syria // The Politics and Change in the Middle East*. Wash., 1993; Pipes Daniel, *Greater Syria*, NY, 1990, *American Policy Toward Islam*, Georgetown University, Center for Muslim-Christian Understanding, (September 23, 1999) [www.danielpipes.org](http://www.danielpipes.org), Greater Syria, NY, 1990; Zisser Eyal, *Appearance And Reality: Syria's Decisionmaking Structure // MERIA* (vol. 2, №. 2 - May 1998), *Asad's Legacy - Syria in Transition*, NY, 2000, *Clues to the Syrian Puzzle // The Washington Quarterly* (23-2, Spring 2000); *The Alawis, Lords of Syria: From*

*Ethnic Minority to Ruling Sect // Minorities and the Arab World*, London, 1999; *The Syrian Army: Between the Domestic and the External Fronts*, MERIA (vol. 5, №. 1 - March 2001)

<sup>8</sup> Dekmejian Hrair R., *Islam in Revolution. Fundamentalism in the Arab World*, Syracuse, NY, 1995; Batatu Hanna, *Some observations on the social roots of Syria's ruling, military group and the causes for its dominance // The Middle East Journal* (№3 vol.35, 1981 - summer); Syria's Muslim Brethren // *Merip Report* (№ 110-111 November-December, 1982), Hinnbusch Raymond A., *Authoritarian Power and State Formation in Ba'thist Syria: Army, Party, and Peasant*, 1990; Mayer T., *The Islamic Opposition in Syria, 1961-1982 // Orient*, (v.24, №. 4, December), Pereira Judith, *The Shifting Fortunes of Syria's Muslim Brothers // The Middle East* (May, 1983); Seale Patrick, *Asad, The Struggle for the Middle East*, Berkeley, LA, 1989

Բացի վերը նշվածից, լայնորեն օգտագործվել են նաև հայերեն, ռուսերեն, պնզլերեն և արաբերեն լեզուներով մամուլի ու գիտական պարբերականների հարուստ նյութերը:

Պետք է առանձնացնել նաև ինտերնետում տեղադրված նյութերը: Ինտերնետում զետեղված տեղեկությունները թույլ են տալիս ճշտել վիճակագրական տվյալները, միջազգային զարգացման միտումները, ինչպես նաև սկզբնաղբյուրների մեծ պաշար են պարունակում: Հատկապես արժեքավոր են գիտական ամսագրերի էլեկտրոնային տարբերակները և էլեկտրոնային գրադարանները:

#### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմք են հանդիսանում պատմականության և գիտական օբյեկտիվության սկզբունքները, որոնք հնարավորություն են տալիս դիտարկել իրադարձությունները ոչ թե առանձնացված, այլ ժամանակի և դիալեկտիկական կապի մեջ: Այս սկզբունքների վրա հիմնվելով, աշխատանքում օգտագործվել են պատմա-համեմատական, պատմավերլուծական քննության և միջդիսցիպլինար հետազոտության մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս դիտարկել քաղաքական, տնտեսական և գաղափարական հարցադրումները մեկ ամբողջական համակարգում:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության թեմայի ուսումնասիրությունն ունի ոչ միայն կարևոր գիտական, այլև քաղաքական ու գործնական նշանակություն:

Տեսական առումով այն կարևորվում է Սիրիայի նորագույն պատմության առանձնահատկությունների քննությամբ:

Ատենախոսության թեման և դրա շուրջ մեկնաբանություններն ու եզրահանգումները հնարավորինս օգտակար կարող են լինել պատկերացում կազմելու և ճիշտ հասկանալու ժամանակակից Սիրիայի սոցիալ-տնտեսական կառուցվածքը, ներքաղաքական գործընթացները, ինչպես նաև արտաքին քաղաքական հարաբերությունները և դրանց տրամաբանությունը:

Աշխատանքը կարևորվում է նաև Սիրիայի պատմության և տնտեսական զարգացման առանձնահատկությունների լուսաբանման, ինչպես նաև դրանց յուրահատկության խոր ընկալման առումներով:

Հետազոտության գործնական նշանակությունը կարևորվում է Սիրիայի հետ քաղաքական և տնտեսական կապեր ամրապնդելու, արտաքին քաղաքական հայեցակարգի մշակման տեսանկյուններից: Աշխատանքի արդյունքները կարող են օգտագործվել գիտական հետազոտություններում և Սիրիայի Արաբական Հանրապետության նորագույն պատմության դասընթացը շարադրելիս:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են ԵՊՀ Հայաստանին հարակից երկրների պատմության ամբիոնի նիստերի ընթացքում: Դրանք ներկայացվել են նաև զեկույցների տեսքով՝ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում, ՌԴ ԳԱ Արևելագիտության ինստիտուտում և Մոսկվայի Պետական Համալսարանում տեղի ունեցած գիտաժողովներում:

Ատենախոսությունն ամբողջությամբ քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնի կողմից: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրակացությունները հրապարակվել են հեղինակի մի շարք գիտական աշխատություններում:

Հեղինակի հրատարակած թեզերի ու հոդվածների ցանկն առանձին ներկայացված է սեղմագրի վերջում:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒԹՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը կառուցված է հիմնախնդրային-ժամանակագրական սկզբունքով: Առաջին երկու գլխում հետազոտության առարկան իսլամական արժատականությունը, դիտարկվում է ժամանակագրական սկզբունքով: Երրորդ գլխում քննարկվում են ատենախոսության թեմային առնչվող առանձին հիմնախնդիրներ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, վերջաբանից, օգտագործված զրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպվում են նրա նպատակն ու խնդիրները, ներկայացվում է աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, տրվում է օգտագործված

գրականության համառոտ տեսությունը, պարզաբանվում են աշխատանքի մեթոդաբանական հիմքը և գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին զլխում «Իսլամական արմատականության ծնունդը Սիրիայում և նրա զարգացման նախնական փուլը (1946-1970թթ.)», տրվում են այս երևույթի ընդհանուր բնութագիրը և Սիրիայում իսլամական արմատականության առաջացումն ու զարգացումը մինչև 1960-ական թթ. վերջը:

Առաջին ենթազուխը վերնագրված է «Իսլամական արմատականությունն իբրև քաղաքական գաղափարախոսություն»: Չնայած աշխատանքը նման բարդ ֆենոմենի ամբողջական և ավարտուն հետազոտման նպատակ չի հետապնդել, սակայն ատենախոսության սկզբում հեղինակն անհրաժեշտ է գտել ներկայացնել իսլամական արմատականության բնորոշումն իբրև քաղաքական գաղափարախոսություն, նրա առաջացման և զարգացման պատմությունը, ինչպես նաև այս երևույթին բնորոշ հիմնական առանձնահատկություններ: Սրա պատճառը պարզ է: Սիրիական արմատականությունը հանդիսանում է ընդհանուր իսլամական արմատականության մի մասը և, բնականաբար, սիրիական տարատեսակն ուսումնասիրելու համար չէր կարելի խուսափել նաև իսլամական արմատականությանը վերաբերվող տեսական հարցերի քննարկումից:

Ատենախոսության հիմնական տերմիններն են «արմատականություն», «իսլամիզմ» և «քաղաքական իսլամ», որոնք, չնայած գիտության մեջ գոյություն ունեցող բազմաթիվ տեսակետների, հեղինակն օգտագործում է որպես հոմանիշներ: Նման մոտեցումը թույլ կտա խուսափել խառնաշփոթից և բազմաթիվ դժվարություններից:

Հիմնական, բազային սկզբունքների պահպանման ձգտումը կրոնական ընդհանուր երևույթ է: Այն բնորոշ է բոլոր մեծ կրոններին, սակայն իսլամում ունի ավելի մեծ արտահայտություն՝ այս կրոնին բնորոշ մի շարք առանձնահատկությունների պատճառով: Դրանց այս պատճառով իսլամն անցնելով կրոնական երևույթի սահմանները, վերածվեց հասարակության զարգացման գաղափարախոսության և քաղաքական ծրագրի: Այդ առանձնահատկություններն են իսլամի ներքին հատկություններ հանդիսացող ունիվերսալությունը, կրոնի համատարած կամ տոտալ բնույթը, դրա ընդգծված պետական բնույթը և ի սկզբանե քաղաքականացման բարձր աստիճանը: Միաժամանակ պետք է նշել իսլամի մոբիլիզացնող հատկությունը:

Ընդհանրապես, իսլամը միշտ էլ օգտագործվել է տարբեր քաղաքական ուժերի կողմից որպես հասարակության վրա ազդելու հզոր գործոն: Այն

օգտագործվել է եւ օտար մվաճողների դեմ պայքարում, եւ անկախությունից հետո, պետություն կառուցելու գործում: Բացի այդ, իսլամին որպես բացարձակ արժեքի դիմել են եւ իշխանությունները, եւ ընդդիմությունը: Եթե առաջինները փորձել են իսլամում գտնել իրենց գործողությունների արդարացումը, ապա վերջիններս օգտագործել են կրոնը իշխանության գործողությունները քննադատելու համար: Սա ակնառու քայլ էր և զարմանալի չէ, որ «Մուսուլման եղբայրների» կազմակերպության հիմնադիր և առաջնորդ Գ.ալ-Բաննան 20-րդ դ. 30-ական թթ. ձևավորեց հստակ և կուռ գաղափարական կառույց, որը հետագայում դարձավ նորաստեղծ իսլամական կազմակերպությունների գաղափարական հիմքը:

Նրա ծրագիրն առաջարկում էր լուծել իսլամական հասարակության առջև ծագող բոլոր խնդիրները Ղուրանին անվերապահ հետևելով: Հռչակվում էին էզալիտար, սոցիալական պետության սկզբունքները: Իսլ ծրագրի հակաարևմտյան բնույթն առաջ էր քաշում զարգացման սեփական կամ «երրորդ» ուղին: Հետագայում նշված ծրագրի տարբեր հետևողներ տարբեր մեկնաբանություններ հավելեցին այս գաղափարախոսությանը, սակայն նրա էությունը չփոխվեց: Ծրագիրն ամենամեծ խմբագրման ենթարկվեց 20-րդ դ. 60-ական թթ., երբ տեղի ունեցավ շարժման ժայռահեղացումը:

Այս իմաստով, իսլամական արմատականությունը կարելի է բնութագրել իբրև քաղաքական շարժում, որը ձգտում է հարմարեցնել հասարակական զարգացումը առաջին խալիֆների ժամանակների իսլամական դոգմատիկայի հետ և պետության գործունեության հիմքում դնել իսլամի և շարիաթի կանոնները:

Երկրորդ ենթազուխում «Իսլամական շարժման ծագումը Սիրիայում», գնահատվում է Սիրիայի պատմական զարգացումը 20-րդ դարում մինչև Բաաս կուսակցության իշխանության գալը: Վերլուծված է նաև «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության ծագումնաբանությունը, դիտարկված է նրա տեղը երկրի քաղաքական համակարգում, ինչպես նաև փոխհարաբերությունները պետական իշխանության մարմինների հետ մինչև բաասական հեղափոխությունը:

Անկախություն ձեռք բերելուց հետո, Սիրիան զարգանում էր չձևավորված տարածքային և ազգային ինքնագիտակցության պայմաններում: Այս զարգացումն ուներ իր առանձնահատկությունները: Իշխանական կառույցների և քաղաքական էլիտայի բավարար լեգիտիմության փաստացի բացակայությունը հանգեցրեց բանակի դիրքերի ամրապնդման: Այս փաստն ազդեցություն ունեցավ նաև երկրի զարգացման ուղու ընտրության վրա: Անկախության ձեռքբերումից հետո, երկրի առջև ծառայել էր զարգացման գաղափարախոսության ընտրության հարցը:



Ընտրությունը պետք է կատարվեր ազգայնականության և իսլամականության միջև: Սակայն, քանի որ գերիշխող համակարգ հանդիսացող բանակը մեծամասամբ կազմված էր էթնոկրոնական փոքրամասնության ներկայացուցիչներից, ապա հասկանալի է, թե ինչու է ընտրությունն արվել առաջինի օգտին:

Սակայն այս պայմաններում իսլամական զարգացման ուղու կողմնակիցները ստեղծեցին իրենց կազմակերպությունը, որի գործունեությունը, մինչև Բասս կուսակցության իշխանության գլուխ գալը, կարելի է ենթարկել հետևյալ պարբերականացման:

*Առաջին շրջան* 1930-ական թթ. – 1946 թ., տեղի ունեցավ իսլամական կազմակերպությունների միավորում և «Մուսուլման-եղբայրներ» կազմակերպության ստեղծում: Չետաբքբի է, որ ի տարբերություն եգիպտական կազմակերպության, Սիրիայում այս գործընթացը տեղի ունեցավ արագացված տեմպերով:

*Երկրորդ շրջան* 1946-1952 թթ., իսլամիստական շարժման կայացման շրջան, երբ տեղի ունեցավ կուսակցության ազդեցության ուժգնացում Սիրիայի ներքին քաղաքականության վրա: Այն ակտիվորեն մասնակցեց ընտրություններին և աստիճանաբար դարձավ երկրի ներքաղաքական ոլորտի կարևորագույն դերակատար:

*Երրորդ շրջան* 1952-1961թթ., տեղի ունեցավ կազմակերպության թուլացում: Պատճառը կազմակերպության գործունեության արգելումն էր նախ դիկտատոր Ա.Շիշեբլիի կառավարման, ապա Միավորված Արաբական Հանրապետության գործունեության շրջանում, ինչպես նաև կազմակերպության ղեկավար Մ.աս-Սիբախի սոցիալիստական գաղափարներով տարվելը, ինչը կազմակերպությունից վանեց նրա կողմնակիցներից շատերին:

*Չորրորդ շրջան* 1961-1963 թթ., հնարավոր է, որ արմատականների առավելագույն ուժեղեցման շրջանն էր: Ընդ որում, կարելի է ենթադրության անել, որ եթե չլիներ բասսական հեղափոխությունը, ապա իսլամականների իշխանություն գալը հնարավոր էր դիտարկել իբրև զարգացման ամենահնարավոր հեռանկարներից մեկը:

Երրորդ ենթազխում «Բասս կուսակցության իշխանության գալը և սիրիական իսլամիզմը 1960-ական թթ.», քննարկվում է Բասս կուսակցության քաղաքականությունը իշխանության գալուց հետո: Վերլուծվում են նաև «Մուսուլման-եղբայրներ» կազմակերպության անցումը ընդհատակ և աստիճանական բաժանումը երկու թևի՝ արմատական և չափավոր:

Արանով սկսվեց սիրիական պատմության մի նոր շրջան: Չեղափոխությունը իշխանության բերեց նոր սոցիալական խավերի՝ գյուղացիության և փոքրամասնությունների ներկայացուցիչների: Հին սեփականատերերը, նոր վարչակարգի անցկացրած ունեցվածքի լայնամասշտաբ ազգայնացման հետևանքով, զրկվեցին իրենց միջոցներից: Բասսն արգելեց նաև ընդդիմադիր կուսակցությունների գոյությունը և, փաստորեն, երկրի ներքաղաքական զարգացման մենաշնորհն իր ձեռքը վերցրեց:

Բասսի իշխանության գալը խորապես ազդեց նաև սիրիական «Մուսուլման-եղբայրներ» կազմակերպության վրա: Տեղի ունեցավ շարժման պառակտում և կտրուկ ծայրահեղացում: Վերջինս նոր երևույթ էր Սիրիայի համար, քանի, որ մինչ այդ, տեղական կազմակերպությունը, ի տարբերություն եգիպտականի, իր նպատակների իրականացման համար օգտագործում էր միայն պայքարի քաղաքական մեթոդներ: Տեղի ունեցավ նաև շարժման փոխակերպում: Փաստորեն դառնալով սուննիների բողոքն արտահայտող միակ ուժը, այն գլխավորեց իշխանությունը գրաված երկրի ընդամենը 10 տոկոսը կազմող ալավի փոքրամասնության դեմ տարվող պայքարը: Առաջացած խորը ներքաղաքական ճգնաժամը նշանավորվեց 1964, 1965 և 1967 թթ. ելույթներով: Դրա հետ մեկտեղ, հենց այս շրջանում է, որ շարժումը բաժանվեց երկու մասի՝ չափավոր թևի, որը ներկայացած էր «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությամբ ու նրա կողմնակիցներով, և ծայրահեղական թևի, որը գլխավորում էր Մ.Հադիդը:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒՆԸ, որը կրում է «Իսլամական արմատականությունը Սիրիայում 1970-80-ական թթ.» խորագիրը, նվիրված է 1970-1980 թթ. տեղի ունեցած իրադարձություններին, ներքաղաքական դաշտում կատարված զարգացումներին, դրանց առնչվող էական խնդիրներին և հարցադրումներին:

Այս գլխի առաջին ենթազխում «Հալ-Ասադը և սիրիական իսլամիզմի զարգացման նոր էտապը (1970-1976 թթ.)», դիտարկվում են Հալ-Ասադի իշխանության գալը և հետագայում երկրի ղեկավարումն ամբողջովին իր ձեռքում կենտրոնացնելուն ուղղված քայլերը, ինչպես նաև այդ շրջանում իսլամական արմատականների գործունեությունը և նրանց ակտիվացման նախադրյալները:

Նոր նախագահի պաշտոնավարման սկզբից տեղի ունեցավ իսլամական շարժման ակտիվացում, որը կապված էր Սիրիական հասարակության շրջանում կրոնի դերի ընդհանուր բարձրացման և կառավարության կողմից իսլամականների նկատմամբ քաղաքականության մեղմացման հետ: Դրան հետևեց Սահմանադրության նախագծի դեմ ուղղված իսլամական արմատականների

բավականին հաջող ելույթը 1973 թ., որը հատկանշական է նրանով, որ իսլամականները առաջին անգամ հանդես եկան իբրև ինքնուրույն քաղաքական ուժ և հասան իրենց նպատակին։ Սահմանադրության մեջ ամրագրվեց, որ երկրի նախագահ կարող է լինել միայն իսլամադավան քաղաքացի։

Դեպքերի հետագա զարգացումը միայն ավելացրեց նրանց ուժն ու ազդեցությունը։ Թեև Հ.ալ-Ասադի կառավարման սկիզբը նշանավորվեց տնտեսության որոշակի ազատականացմամբ, սակայն հետագայում սկիզբ առան մի շարք բացասական երևույթներ, որոնք նախագահի դեմ հանեցին ազգաբնակչության մեծամասնությունը։ Դա, նախևառաջ, բնակչության մեծամասնությունը կազմող սուննիների վրդովմունքն էր ավափիների իշխանության ամրապնդման հանդեպ, ինչպես նաև պայմանավորված էր հիասթափությամբ բասասականների կողմից առատորեն տրված, սակայն չիրականացված խոստումներից։ Նման իրողությունը պայմանավորված էր նաև պետական ապարատի բյուրոկրատացմամբ և ահագնացող կաշառակերությամբ։ Այն բանից հետո, երբ սիրիական կառավարությունը միջամտեց լիբանանյան քաղաքացիական պատերազմին, իսլամականների և իշխանությունների հակամարտությունը բացահայտ դարձավ։

Այս շրջանում արմատական շարժումը Սիրիայում զգալի փոփոխություններ կրեց. հին առաջնորդներին փոխարինեց ավելի կոշտ դիրքորոշում ունեցող Ա.Սադ ադ-Դիմը, ինչը նշանավորեց կազմակերպության վերափոխումը կրոնաքաղաքական միավորումից ռազմականի։ Տեղի ունեցավ իսլամական շարժման նյութական բազայի հզորացում և երիտասարդական ուժերի համախմբում։ Սա ոչուրիս գործ էր, քանի, որ Բասսի իշխանության գալուց հետո, իսլամականները գրավել էին այն տեղերը, որոնք թափուր էին մնացել ուսուցիչներին բասասական կենտրոնական կառույցներ տեղափոխելու հետևանքով։ Այսպիսով, ամեն ինչ պատրաստ էր հզոր հակակառավարական ելույթի համար։

Երկրորդ ենթազվխում «Արմատականների և իշխանությունների հակամարտության ուժեղացում (1976-1982 թթ.)», նկարագրված են իշխանությունների և իսլամականների միջև ծագած հակամարտության, որա ընթացքը, ինչպես նաև նախագահ Հ.ալ-Ասադի կառավարության ձեռնարկած պատասխան քայլերը։

1976-1982 թթ. Սիրիան գտնվում էր իսլամականների և իշխանությունների միջև հակամարտության մեջ։ Ծավալուն նախապատրաստությունից հետո, իսլամիստները մարտահրավեր նետեցին կառավարությանը։

*Առաջին շրջանում* հարձակումների թիրախ հանդիսացան միայն ալավի համայնքի երևելի ներկայացուցիչները։ Այսպես, 1976-79 թթ. սպանվեցին այդ համայնքի մի քանի տասնյակ երևելի ներկայացուցիչներ։ Իսկ ամենադաժան սպանությունը տեղի ունեցավ 1979 թ. հունիսի 16-ին, երբ զնդակահարվեցին Հալեպի հրետանային դպրոցի զնդի տասնյակ ուսանողներ։

*Պաշտոնի շրջանում* գործողություններն ավելի մեծ ծավալ ընդգրկեցին, և հատուկ ծրագրված սպանություններին փոխարինեց լայնամասշտաբ գործողությունների մարտավարությունը։ Բացի այդ, շատացան արմատականների թիրախները։ Ձուներ եղան նաև իշխանություններին սատարող այլ դավաճաններին հարող ներկայացուցիչների շարքում։ Այս շրջանում իշխանությունների գործողությունները զարմանալիորեն պասիվ էին։

Միայն 1980 թ. սկզբին Բասս տարածաշրջանային 7-րդ համագումարից հետո այդ գործողություններն ավելի նպատակադրված և կտրուկ դարձան։ Այս համագումարում հաղթող դուրս եկավ ռազմական լուծում առաջարկող թե՛ նախագահի եղբայր Ռ.ալ-Ասադի գլխավորությամբ։ Սկսվեց հակամարտության երրորդ շրջանը, երբ իշխանությունները նախ փորձեցին որոշ զիջումների գնալ ներքին քաղաքականության մեջ, բարելավել բնակչության սոցիալական վիճակը, ապա նաև անցան կոշտ քայլերի։ Փաստորեն իշխանությունն ինքը ջիհադ հայտարարեց իսլամիստներին՝ գործի դնելով բանակը։ Իսկ 1980 թ. հուլիսի 7-ին սիրիական խորհրդարանի ընդունած թիվ 46 որոշման համաձայն, «Սուսուլման եղբայրներ» կազմակերպության անդամները դատապարտվեցին մահապատժի։ Սրա հետ մեկտեղ, ֆիզիկապես վերացվեցին ընդդիմադիր մի շարք գործիչներ։

Կառավարության այս հստակ և մտածված քաղաքականությունը ցույց տվեց արմատականների գործողությունների անհույս լինելը։ Նրանցից սկսեցին հեռանալ նաև այն ուժերը, որոնք օժանդակում էին հակակառավարական ելույթներին։

Այս պայմաններում, 1980 թ. վերջում Սիրիայի Իսլամական ճակատի ձևավորումը միանգամայն տրամաբանական, սակայն որոշակիորեն ուշացած քայլ էր (չորրորդ շրջան)։ Դրա միջոցով նախատեսվում էր հաղթահարել մեկուսացումը, որում հայտնվել էին «Սուսուլման եղբայրները», լայնացնել շարժման սոցիալական հեռավորումը և ստեղծել կառավարությանն այլընտրանքային կառույց՝ ուժեղ առաջնորդներով և գործողությունների ծրագրով։

Սիրիայի Իսլամական ճակատի ծրագիրը բավականին ուժեղ էր հակաբասասական ընդդիմության համախմբման տեսակետից։ Դրա հետ մեկտեղ, չի կարելի չնկատել, որ այն ուներ հստակ պոպուլիստական բնույթ և ամենևին էլ չէր

համապատասխանում իսլամական հեղափոխության էությանը: Բացի այդ, ստեղծվելով ուժերի միավորման համար, այն կազմակերպության ներսում պառակտումների պատճառ դարձավ: Ստեղծված միավորումը չկարողացավ լուրջ բեկում մտցնել դեպքերի հետագա զարգացման մեջ: Նախաձեռնությունը լիովին անցել էր իշխանությունների կողմը: Այսպիսով, 1982 թ. դրությամբ, իսլամական շարժումը Սիրիայում հայտնվել էր փակուղում:

Այս գլխի վերջին հատվածում «Իսլամական շարժումը Սիրիայում 1982-1986 թթ.», լուսաբանված է իշխանությունների և արմատականների միջև տեղի ունեցած վճռական բախումը Չամա քաղաքում: Բացի այդ, քննարկված է 1982 թ. իսլամական ելույթի ճնշումից հետո ստեղծված իրավիճակը:

Իսլամական արմատականների և իշխանությունների միջև վճռական բախումը տեղի ունեցավ 1982 թ. փետրվարին, Չամա քաղաքում: Իսլամականները գրավեցին քաղաքը և հաշվեհարդար տեսան քաղաքում գտնվող վարչակարգի կողմնակիցների նկատմամբ: Իշխանությունները գործի դրեցին բանակը և բազմաթիվ զոհերի զնով վերականգնեցին վերահսկողությունը: Չամայի ապստամբությունը հանդիսացավ իսլամականների ամենախոշոր գործողությունը, սակայն այստեղ նրանց ուժերը վերջնականապես կոտրվեցին: Իր հերթին, կառավարական ուժերի դաժանությունը զգալի ներազդեցություն գործեց ընդդիմադիրների վրա: Ուժերը վերականգնելուն ուղղված հետագա բոլոր ջանքերն ապարդյուն եղան: Իսլամական արմատականները վերջնականապես կորցրեցին իրենց ազդեցությունը երկրի քաղաքական կյանքում: Սակայն, սրա հետ մեկտեղ, պետք է նշել, որ չնայած իսլամականների ռազմական ուժը կոտրված է, այնուամենայնիվ, նրանք շարունակում էին մեծ ազդեցություն ունենալ հասարակության այնպիսի կարևոր ոլորտում ինչպիսին սոցիալականն է (բարեգործություն, կրթություն և այլն):

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽՈՒՄ «Սիրիական իսլամիզմի բնութագիրը» տրվում են Սիրիայում արմատականության ընդհանուր բնութագիրը, ընդհանուր իսլամական շարժման հետ եղած աղերսներն ու առանձնահատկությունները: Քննարկվում են Սիրիայում իսլամական արմատականության առաջացման պատճառները, ինչպես նաև հակամարտող կողմերի սոցիալական հենարանների խնդիրը: Բացի այդ, դիտարկվում են իսլամական շարժման զարգացման միտումները:

Այս գլխի առաջին ենթագլխի՝ «ՍԱՀ-ում իսլամիզմի ակտիվացման գործոնները», քննարկման հիմնական խնդիրներն են ՍԱՀ-ում կրոնի քաղաքականացման ուժեղացման գործոնների սահմանազատումը և դասակարգումը:

Իսլամականության առաջացման և դրա ծայրահեղականացման գործոնները գաղափարական, տնտեսական, ժողովրդագրական, ներքին քաղաքական, դավանական արտաքին քաղաքական և մշակութափոփոխական են: Սիրիայի համար բնորոշ է այդ գործոնների բարդ համակցությունը: Չմվազեցնելով մյուսների դերը, առանձնացնենք դրանցից մի քանիսը՝ գաղափարական վակուումի լրացումը, արտաքին ուժերի ազդեցությունը և Բասսի վարչակարգի միակ իրական ընդդիմության դերակատարության ստանձնումը սիրիական իսլամականների կողմից: Իսկ ամենակարևորը կարելի է համարել սիրիական արմատականության հակաալավիական բնույթը:

Երկրորդ ենթագլուխը՝ «Սիրիական իսլամականների և ալ-Ասադի վարչակարգի սոցիալական հենարանը», նվիրված է իսլամական շարժման սոցիալական հիմքի բնորոշմանը: Անդրադարձ է կատարվում նաև իշխանությունների կառուցվածքային հենքի քննությանը:

Բասսի և իսլամականների հակամարտությունը նաև սիրիական հասարակության որոշակի սոցիալական խավերի և խմբերի հակասությունների բախումն էր: Իսլամականներին սատարում էին հասարակության մեջ միշտ ամենակտիվ մաս հանդիսացող ցածր և միջին խավերը, այսպես կոչված, մանր բուրժուազիան: Նրանց կողմնակիցներից էին նաև «առաջին սերնդի քաղաքացիները», որոնք նոր էին տեղափոխվել գյուղերից և մանր քաղաքներից, ինչպես նաև կրոնական և ազնվական ընտանիքների ժառանգները: Եթե դիտարկենք այս շերտերի պրոֆեսիոնալ պատկանելիությունը, ապա այստեղ կարելի է տեսնել ուսանողների՝ առաջին հերթին բժշկական և տեխնիկական ֆակուլտետներից, ուսուցիչների, մտավորականության մի մասի, արհեստավորների և առևտրականների, բժիշկների, իրավաբանների և ճարտարագետների: Մի խոսքով, դա կրթված սուսնիական միջին խավն էր, որը տեսնում էր այս շարժման մեջ պետական այլ կառույցներում (բանակ, իշխող կուսակցություն) իր թուլության վերացման հնարավորությունը:

Տարածքային տեսակետից, նախնական փուլում, իսլամականների կենտրոն էր հանդիսանում մայրաքաղաք Դամասկոսը, սակայն 60-ականների կեսերին տեղի ունեցավ գաղափարական և կազմակերպչական հիմնական կենտրոնների տեղափոխումը Սիրիայի հյուսիսային քաղաքներ՝ Հալեպ և Համա: Իսլամականների տարիքային բնութագիրը հետևյալն էր. անդամների ճնշող մեծամասնությունը կազմում էին 17-26 տարեկան երիտասարդները:

Բաասականների սոցիալական բազան ավելի մեծ էր: Այն, առաջին հերթին, ծայրամասերի և գյուղերի բնակչությունն էր, որն ազրաբային բարեփոխումների հետևանքով, բարեկեցիկ ապրելակերպ վարելու հնարավորություն ստացավ: Բացի այդ, նրա մեջ մտնում էին նաև բանվորական շերտը, հիմնականում հումանիտար ֆակուլտետների ուսանողները և հոգևորականության որոշակի զանգված: Շատ կարևոր մաս էր կազմում նաև տնտեսական վերնախավը (մասնավորապես Դամասկոսից), այսպես կոչված, նոր բուրժուազիան: Եվ, իհարկե, բյուրոկրատական հսկայական ապարատը, Բաաս կուսակցության անդամները և բանակը: Նախագահ Յ.ալ-Ասադի բնական հենարանն էր հանդիսանում ալավի բնակչությունը, ինչպես նաև այլ փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Իհարկե, պետք է հատուկ նշել նախագահի անձի դերի և նրա անձնական հենարանների մասին՝ նախագահի ընտանիքի, հարազատ Մաթավիրա ցեղի, ալավի փոքրամասնության, ինչպես նաև սիրիական և արաբական հենարանների:

Երրորդ ենթաբաժնում «Արտաքին ուժերի ազդեցությունը սիրիական իսլամիզմի զարգացման վրա», հետազոտված է այլ պետությունների վերաբերմունքը Սիրիայում տեղի ունեցած իրադարձություններին:

Սիրիայի հարաբերությունները բոլոր հարևանների հետ չափազանց լարված էին և զարմանալի չէ, որ նրանցից յուրաքանչյուրը կարող էր մեղադրվել սիրիական իսլամականների օժանդակելու մեջ: Տարբերությունը միայն այդ օժանդակության ձևի մեջ էր: Եթե Զորդանանի և Իրաքի դեպքում օգնությունը կազմակերպվում էր հենց այս երկրների իշխանական խողովակներով, ապա Եգիպտոսից և Լիբանանից այն տրամադրվում էր այլ կազմակերպությունների՝ եգիպտական ծայրահեղական իսլամականների և լիբանանյան աջերի միջոցով: Առանձնանում էր Սաուդյան Արաբիան, որը միաժամանակ ֆինանսական օգնություն էր տրամադրում եւ սիրիական իշխանություններին, եւ իսլամական ընդդիմությանը: Մեծ տերությունների համար ՍԱՀ հանդիսանում էր քաղաքական և զաղափարական մրցակցության թատերաբեմերից մեկը: Դժվար է գտնել փաստեր, որոնք կվկայեն ԱՄՆ օգնությունը արմատականներին, սակայն տրամաբանական կլինի կարծել, որ Յ.ալ-Ասադի իշխանության թուլացումը շատ ձեռնառու կլիներ Միացյալ Նահանգներին, ինչը թույլ կտար ավելի մեծ զիջումներ ակնկալել Սիրիայից մերձավորարևելյան խնդրի կարգավորման հարցում: Իսկ Խորհրդային Միությունը հոմեոնիստական Իրանի հետ մեկտեղ անվերապահորեն սատարեց Յ.ալ-Ասադի կառավարությանը:

Սիրիայի այս հասարակությունը չափազանց կշռադատված և ճկուն քաղաքականություն վարեց հակամարտության ամբողջ ընթացքում: Որդեգրելով բացահայտ չեզոքության քաղաքականություն, այս ազգաբնակչությունը խուսափեց հնարավոր բռնաճնշումներից և պատվով դուրս եկավ ծանր փորձությունից:

ՎԵՐՋԱԲԱՆՈՒՄ, ամփոփելով ատենախոսության հիմնական արդյունքները, հեղինակը տալիս է 20-րդ դարի 60-80-ական թթ. սիրիական իսլամիզմի ընդհանուր գնահատականը:

#### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՅԵՂԻՆԱԿԻ ԳՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Իսլամական արմատականությունը Սիրիայում: Առաջացման և ակտիվացման պատճառները // «Արևելք» հոդվածների ժողովածու, Երևան, 2002, էջ 185-190:
2. Իսլամական ֆունդամենտալիզմը Սիրիայում: Առաջացման և ակտիվացման պատճառները // (զեկուցման թեզեր), ԳՀ ԱՄՆ Արևելագիտության ինստիտուտի երիտասարդ արևելագետների հանրապետական 23-րդ գիտական նստաշրջան, Երևան, 2002, էջ. 38-41:
3. Политический ислам Сирии: возникновение и перспективы // Арабские страны Западной Азии и Северной Африки: выпуск 5, Материалы 5-ой конференции Института Востоковедения РАН, Москва, 2002, с. 247-260.
4. Различия в трактовке «такфира (обвинения в неверии) у Хасана аль-Банны и современных фундаменталистов» // Материалы Международной научной конференции студентов, аспирантов и молодых ученых «Ломоносов» (вып.7), М.,2002, с.91-92.
5. Некоторые отличительные черты сирийской и египетской организаций “Братья-мусульмане” // Материалы Международной научной конференции студентов, аспирантов и молодых ученых «Ломоносов» (вып.7), М.,2002, с.90-91.
6. Исламский фундаментализм как политическая идеология и факторы его проявления на современном этапе // Материалы Международной научной конференции студентов, аспирантов и молодых ученых «Ломоносов» (вып.7), М.,2002, с. 142-143.

МАНУКЯН СУРЕН АГАСИЕВИЧ

«ИСЛАМСКИЙ ФУНДАМЕНТАЛИЗМ В СИРИИ В 1960-80-Х ГГ.»

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – «Всеобщая история»

Защита состоится 29 ноября 2002 г. По адресу: 375019, г.Ереван, проспект Маршала Баграмяна, 24 г, Институт Востоковедения НАН РА

#### РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению исламского фундаментализма в Сирии в 60-80 гг. Исламизм сыграл особую роль в развитии политических процессов в САР. С 1976 г. до 1982 г. Сирия находилась в состоянии жесткого противостояния между исламистами и правящей партией Баас. Проблематика данной диссертационной работы актуальна для политических реалий всех стран Ближнего и Среднего Востока. Причина в том, что радикальный исламизм является фактором не только серьезно дестабилизирующим ситуацию в отдельной стране, но и представляющую собой угрозу для региональной и международной безопасности. Кроме того, для независимого армянского государства, чьим важным внешнеполитическим партнером является Сирийская Арабская Республика (САР) важно понимать глубинные механизмы возникновения внутрисирийских проблем и анализировать возможное усиление фундаментализма в этой стране.

Диссертантом поставлены следующие задачи: проследить процесс развития политического ислама в Сирии в период, охватывающий 60-80-е годы XX в., а также разработать научную периодизацию истории движения политического ислама в стране. В работе сделана попытка также выявить причины, обусловившие появление и стремительный подъем исламистских движений в САР, представлены их цели, организационная структура, показано место, занимаемое фундаменталистами в сирийском обществе, выявлены международные связи, дается анализ идеологических воззрений исламистов, а также некий прогноз развития движений политического ислама. Кроме того нашей задачей является рассмотрение основных предпосылок и причин возникновения противоречий между Баас и исламистами, описание динамики противостояния исламского движения с властями страны в указанный период. Важным является также анализ соотношения социальной базы режима и исламской оппозиции.

Работа состоит из введения, трех глав, заключения и библиографии.

Во введении обосновывается актуальность темы исследования, дается обзор литературы и источников, использованных в работе, формулируются цель и задачи данного исследования, описывается структура работы и ее практическое значение.

В первой главе «Зарождение исламского фундаментализма в Сирии и начальный этап его развития (1946-1970 г.)» дается общая характеристика данного явления. Далее в первой главе описывается историческое развитие Сирии до прихода к власти Хафеза аль-Асада. В первой главе также анализируется организационный генезис движения Братьев-мусульман, рассматривается его место в политической системе страны, а также его взаимоотношение с органами государственной власти и возникшие по причине острого антагонизма выступления 1964, 1965 и 1967 гг.

Во второй главе «Исламский фундаментализм в Сирии в 1970-80 гг.» дается общий обзор событий, произошедших в период 1970-1986 гг., рассматриваются предпосылки для возникновения радикального исламизма в начале правления Х.аль-Асада, деятельность исламистов по превращению недовольства политикой правящего режима в организованное восстание, ответные шаги, предпринятые правительством под руководством президента САР Х.аль-Асада, а также деятельность других оппозиционных и проправительственных сил в течение всего конфликта. Кроме того, описывается ситуация после подавления выступлений исламистов в 1982 г.

В третьей главе – «Характеристика сирийского исламизма» – исследуется общая динамика развития этого явления в Сирии, его похожесть и специфические особенности, выявляются факторы радикализации исламского фундаментализма в САР, коррелируется социальная база движения, рассматривается организационная структура организации, исследуется отношение других государств к событиям происходящим в стране.

В заключении подводятся итоги исследования, обобщаются выводы, сделанные в ходе написания данной работы из которых следует отметить, что 1) с 70-х гг. происходит своеобразная антиалавитизация движения. В отличие от большинства радикальных движений сирийские исламисты не противопоставляли себя всему обществу. Сердцевиной сирийского исламизма была именно антиалавитская компонента. 2) Сирийский фундаментализм был чисто городским движением, ареной всех выступлений и акций, организованных организацией становились именно крупные города страны, в отличие например от Египта, где эти исламские настроения были особенно популярны в аграрном Верхнем Египте. 3) Фрагментация движения, в отличие от других стран не приводила к вражде между различными течениями. Так, между ними не происходит стычек или столкновений характерных, скажем, для египетских организаций. Однако

многочисленные расколы, возникающие в основном из-за различий в понимании степени жесткости мер, предпринимаемых по отношению к властям, сформировали достаточно обособленные движения -- воинствующих радикалов и умеренных исламистов.

Кроме того в заключении дается прогноз возможного развития исламского фундаментализма в Сирии, согласно которому у радикального исламистского движения нет существенных шансов на успех в Сирии. Хотя временно это движение может оказывать заметное воздействие на жизнь общества, однако, представляется, что новые попытки исламизации Сирии столкнутся в серьезнейшем противоборстве в стране.

SUREN MANUKYAN

ISLAMIC FUNDAMENTALISM IN SYRIA IN 1960-80

